«Շին-ՏԱԼԳ փորձագետ» ՍՊԸ
(Նախագծերի փորձաքննություն)
ԱՐՏՈՆԱԳԻՐ Հ.15750

«Հաստատում եմ»

«29» Մարտի 2016թ.

Տնօրեն Գ. Գրիգորյան

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ h. Գ-12/ԵՔ-14/16

ՕԲՅԵԿՏ – Քաղաք Երևան, Դավթաշեն վարչական շրջան, «Տ. Պետրոսյան փողոցի վերջնամասից դեպի 2-րդ թաղամաս տանող ճանապարհի լայնացում և բարեկարգում» օբյեկտի նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների

Պատվիրատու՝
«Բաբայան-ԼԱՏ նախագիծ» ՍՊԸ

Նախագծող՝
«Բաբայան-ԼԱՏ նախագիծ» ՍՊԸ

Նախագծման հիմքը.

1. Տեխնիկական բնութագիրը,
2. Երևանի քաղաքապետարանի կողմից № ԵՔ-ԲԸՀԱՇՁԲ-12/67-1 ծածկագրով 23.11.2013թ-ին կնքված պայմանագիրը.

1. Ն Ե Ր Ա Ծ Ա Կ Ա Ն

Ներկայացված նախագծով նախատեսվում է հարթեցնել տարածքը, ապամոնտաժել չգործող, հին ջրեռուցման համակարգի ե/բետոնյա առվակները, տարածքում առկա կոմունիկացիոն և ինժեներական չգործող և շարքից դուրս եկած գծերը, քանդել քայքայված ա/բետոնե ծածկույթը, հին եզրաքարերը: Նախատեսված է կառուցել նոր տրանսպորտային հանգույց-ճանապարհահատված՝ տեղադրել բետոնե, բազալտե նոր եզրաքարեր:

Նախահաշվային փաստաթղթերը կազմված են համաձայն գործող կարգի, Քաղաքաշինության նախարարության կողմից հաստատված շինարարական նորմերի արժեքի հաշվարկման կարգի:

Անցումային գործակիցները՝	
- աշխ. ծախսերի համար	1991.88
- մեքենաների շահագործման համար	2934.66
Վերադիր ծախսերը կազմում են	13,3%
Շահույթը կազմում է	11%

Նյութերի արժեքը ընդունված է համաձայն ինֆորմացիոն տեղեկագրի (№11 2015թ.), մշակված «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից և շուկայի:

Դիտարկելով ներկայացված նյութերը, փորձաքննությունը նշում է, որ.

Աշխատանքային նախագծում կան բացթողումներ և վրիպակներ: Բացակայում են հետևյալ փաստաթղթերը.

- Նախագծման առաջադրանքը,
- Նախագծվող ճանապարհի ուրվագիծը ըստ գլխավոր հատակագծի,
- Ճարտարապետահատակագծային առաջադրանքը,
- Ինժեներական համակարգերի և գծերի նախագծման տեխնիկական պայմանները, որտեղ պետք է ներառված լինեին նաև տեղափոխման ենթակա գծերը և կառուցվածքները:

Նախագծանախահաշվային փաստաթղթերում առկա շեղումները և դիտողությունները շտկել շինարարական աշխատանքների կատարման ընթացքում:

2. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Ելնելով վերոգրյալից, «Շին-ՏԱԼԳ փորձագետ» ՍՊԸ-ի փորձաքննությունը ուսումնասիրելով ներկայացված աշխատանքային նախագիծը նշում է.

Երևան քաղաքի, Դավթաշեն վարչական շրջանի, «Տ. Պետրոսյան փողոցի վերջնամասից դեպի 2-րդ թաղամաս տանող ճանապարհի լայնացում և բարեկարգում» օբյեկտի աշխատանքային նախագիծը երաշխավորվում է հաստատման: Աշխատանքային նախագծում առկա շեղումները և բացթողումները հաշվի առնել աշխատանքային կարգով՝ շինարարության ընթացքում:

Օբյեկտի շինարարության նախահաշվային արժեքը կազմում է 77463.57 հազ. դրամ, այդ թվում ԱԱՀ-ն:

Աշխատանքային նախագիծը վավեր է ճարտարապետահատակագծային առաջադրանք ստանալուց հետո:

Փորձագետ՝ *Հ. Բաբայան*